ԿՈՏԱՅՔԻ ՀՈՂԲԱԺԻՆ

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ, ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՑԵՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐԸ

63
Կ-77

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1935 ՑԵՐԵՎԱՆ

04 AUG 2011

63
Կ-77 կգ.

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄ

ԿՈՏԱՅՔԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ 1935 ԹՎԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի.

Ի լրումն նախագահության սթ հունվարի 5-ի 6-րդ կետի վորոշման՝

1. Հաստատելով հող-բաժնի կողմից մշակված և մեր շրջանի հողային ու կլիմայական պայմաններին հարմարեցված՝

ա) Հացահատիկային կուլտուրաների,

բ) Բանջարանոցային (կաղամբ, վարունգ, գյազար, ճակնդեղ, պամիդոր, բակլաջան, սոխ, պղպեղ) կուլտուրաների,

գ) Խաղողի այգիների,

դ) Պտղատու այգիների

1935 թ. ագրոպարտադիր կանոնները,

2. Գյուղխորհուրդներին իրավունք և վերապահվում ագրոպարտադիր կանոնները խախտողներին տուգանել մինչև 25 ռ. սահմանների՝ում, կամ հարկադիր աշխատանք տալ մինչև 15 որ։

Սույն վորոշմամբ տուգանված կամ հարկադիր աշխատանքի յենթարկված անձինք կարող են բողոքարկել շրջգործկոմին 7 որվա ընթացքում, վորպիսի բողոքարկումը չի կասեցնում տուժի կիրառումը։

Սույն վորոշման ընդհանուր հսկողությունը դնել շրջմիլիցիայի վրա։

Շրջգործկոմի նախագահ՝ Պ. ԲԱԲԱՅԱՆ

1008
34250

ՀԱՅԱՀԱՍՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԱԳՐՈՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Հացաբույսերի համար կատարել գարնանավար հետևյալ ժամկետներում ըստ զոնաների և բոլոր դյուղերը բաժանել 3 զոնայի։

Ա. զոնա	Ժամկետ Սկզ.	Ժամկետ Վերջ
1. Քանաքեռ .	10/III	20/IV
2. Ավան . . .	»	»
3. Աբինջ . .	»	»
4. Պաղնի . .	»	»
5. Բեթրան . .	»	»
6. Ջրվեժ . .	»	»
7. Գեղադիր .	»	»
8. Սոցգյուղ .	»	»
9. Գյառնի . .	»	30 IV

Բ. զոնա—ցանքի ժամկետները	Սկզ.	Վերջ
1. Մհուբ . .	20/III	30 IV
2. Շահաբ . .	»	»
3. Եյլաբ . .	»	»
4. Արզնի . .	»	»
5. Թաղագյուղ	»	»
6. Ցելղովան .	»	»
7. Արամուս .	»	»
8. Աղաղոր . .	»	»
9. Գյամբեզ .	»	25/IV
10. Թիջրաբակ	»	30/IV
11. Վողջաբերդ	»	»
12. Ավդալար .	»	25/VI
13. Բուլիջա .	25/III	30 IV
14. Ճաթղռան .	»	»
15. Հայ Դողթ	»	»

Գ. զոնա—ցանքի ժամկետ	Սկզ.	Վերջ
1. Նոնուս . .	10/IV	20/V
2. Ն. Նիկոլաև	»	»
3. Գոյքիլիսա	»	»
4. Բյանքյան	»	»
5. Ղզղալա . .	»	»
6. Ղուլլի . .	»	»
7. Դավախար.	»	»
8. Դալաքլու .	»	»
9. Ղարաղալա	»	»
10. Ջառ . . .	»	»
11. Թուքիա .	»	»
12. Բեղաքլու .	»	»
13. Արթիզ . .	»	»

Հերկը կատարել հողի չերտի խորությամբ 18—20 սմ. և անմիջապես փոցխել 1—2 յերես։

Ծանոթություն.—*Այն հողամասերում, վորտեղ գութան չի աշխատում, և տնտեսությունը չունի շրջվող գութաններ, վորպես բացառություն, հողաժնի և ՄՏԿ-ի հատուկ թույլատվությամբ, հերկը կատարել չութով։*

2. Այն բոլոր հողամասերը, որոնք հերկված են նախորդ տարվանից, վաղ գարնանը այդ հողամասերը յենթարկել յերեսվարի և անմիջապես փոցխել։

Աշնանավարի և ցրտահերկի այն հողամասը, որը խիստ վարակված է մոլախոտերով, դաշտ դուրս գալուս անմիջապես փոցխել և մոլախոտերը յերեվալուց հետո միայն կատարել յերեսվարը։

Յերեսվարը կատարել բազմախոփանի գութաններով 10—12 սմ. խորութ., նախորոք հանելով գութանի թեվերը։

Խոպան (խամ) հողերը հերկել աշնանը, գարնանը փոցխել ափսեավոր փոցխերով, խոպան կամ խամ հողերի գարնանավարը թույլատրվում է միայն անհրաժեշտ դեպքում. գարնանը խոպան հողերը վարելուց հետո փոցխել տեղական ծանր փոցխերով։

4. Ծիախոտի, արեվածաղկի, յեգիպտացորենի տեղերը հերկելիս ծղոտների (ցողունների) մնացորդները նախորոք դաշտից հեռացնել, որը խոչնդոտ է հանդիսանում վարի, ցանքի, և արդյունավետ աշխատանքի արտադրողականության։

2. ՍԵՐՄԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Լրիվ կատարել սերմերի տեսակավորումը և հացահատիկի սերմացուն զտել 100 տոկոսով։

2. Կատարել սերմֆոնդի յերկու ստուգում, առաջինը սերմֆոնդերի առանձնացման ժամանակ, իսկ յերկրորդը ցանքից մեկ ամիս առաջ. վոչ մի դեպքում չի թույլատրվում ցանքը կատարել առանց սերմ ստուգող լաբորատորիայի սերմի վորակը հաստատող փաստաթղթերի։

3. Կոնդիցիայից (ընդունված նորմալ ստանդարտից) բարձր աղբոտված սերմացուները զտել յերկրորդ անգամ։

4. Մինչև ցանքի սկսելը ախտահանել ամբողջ սերմացուն. թույլատրվում է չախտահանել միայն այն սերմացուն, որի վոչ վարակված լինելը կհաստատվի սերմ ստուգող լաբորատորիայի կողմից։

3. ՑԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՈՒ ՆՈՐՄԱՆԵՐԸ

1. Հացաբույսերի ցանքը սկսել և ավարտել հետևյալ ժամկետներում ըստ զոնաների

ԶՈՆԱՆԵՐ	Սկիզբը	Վերջը	Ծանոթութ.
1. Քանաքեռ, Ավան և այլն . . .	10/3	20/4	
2. Մեղրի, Շահաբ և այլն	20/3	30/4	
3. Նոնաշեն, Արթիզ և այլն . . .	10/4	20/5	

2. Սահմանել ցանքի հետեվյալ նորմաները ըստ կուլտուրաների.—

№ Ը/Կ	Կուլտուրաները	Ա. Զոնա	Բ. Զոնա	Գ. Զոնա	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—
1	Ցորեն գարնան	1,4	1,3	1,25	ա) Շարք. 1,3, շաղացան 1,5
2.	Գարի գարնան . . .	1,5	1,4	1,3	բ) Շարք. 1,25, շաղացան 1,45
3.	Հաճար	1,45	1,35	1,25	գ) Շարք. 1,2, շաղացան 1,3
4.	Կտավատ	0,6	0,5	0,5	
5.	Լոբի հատիկային . .	0,75	0,70	0,70	
6.	Բազմամյա խոտաբույս	0,30	0,28	0,28	
7.	Միամյա խոտ վիկա .	1,10	1,0	1,0	
8.	Բուռուշնա	0,70	0,70	0,70	

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Առանձին գյուղերի տարբեր հողակտորների յուրահատուկ պայմանները հաշվի առնելով, առանձին դեպքերում թույլատրվում է փոփոխել սույն ագրոպարտադիր կանոնները, սերմի նորմաները իջեցնելու կամ բարձրացնելու համար, որը անպայման պիտի կատարվի հողբաժնի և ՄՏԿ-ի ագրոպերսոնալի միջոցով։

4. ՑԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ.—

1։ Կատեգորիկ կերպով արգելվում է ցանքը կատարել գութանի կամ չթի տակ (խոզանացան կամ բողազ.)։ Արգելվում է հողբաժնի և ՄՏԿ-ի կողմից տրված շարքացանի պլանը փոխարինել շաղացանի։

2. Շաղացանը կատարելիս ցանել նախապես հերկված հողի մեջ և սերմերի ծածկումը կատարել զիգզագ կամ տեղական ծանր փոցխերի միջոցով։

3. Ցանքսի տափանումը, որպես սերմեր ծածկելու և տարածությունը հարթեցնելու հիմնական ձևը, արգելվում է, ուստի հողի մշակման ընթացքում կոշտեր չառաջացնելու և հողի ստրուկտուրան պահպանելու նպատակով սահմանել խիստ հսկողություն։

Հերկը կատարել հողի կայուն վիճակում (քեշի յեկած ժամանակ)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հողբաժնի և ՄՏԿ-ի հատուկ համաձայնությամբ կոշտերի առաջացման կամ սերմերի վատ ծածկման դեպքում թույլատրել կատարել տափանում կամ ցաքանում (առավել ևս) տեղական ցաքաններով։

ՑԱՆՔԵՐԻ ԽՆԱՄՔԸ.—

1. Գարնանացանը կատարելուց 15—20-որ հետո հաջորդաբար սկսել ցանքերի քաղհանի (բոլոր տեսակի) աշխատանքները, քաղհանել առաջին հերթին աշնանացանը, անհրաժեշտ դեպքում՝ 2-րդ քաղհանը (հացահատիկ) այն հաշվով, որ քաղհանը ավարտվի մինչև հացաբույսերի, խոզովակ(ցողուն) կազմելը։

2. Հնձել միջնակների, առուների ու ճանապարհների մոտ գտնված բոլոր մոլախոտերը մինչև նրանց ծաղկելը. քաղհանած և հնձած մոլախոտերի մնացորդները հավաքել և հեռացնել դաշտից։

3. Վաղ գարնանը սկսել վարելահողերի քարերի հավաքը այն հաշվով, որ մինչև տվյալ հողում ցանք կատարելը այդ աշխատանքները ավարտված լինի՝ անհրաժեշտ դեպքում քարերը հավաքել նաև ցանքից հետո, մինչև ցանքի ծլելը. հավաքած քարերը վոչ մի դեպքում չթողնել դաշտի կամ միջնակների մեջ, այլ հավաքել ճանապարհների մոտ և հետագայում հեռացնել։

4. Հացաբույսերի ջրովի ցանքերը ջրել 2 անգամ, առաջին անգամ՝ թփակալման շրջանում, յերկրորդ անգամ՝ հասկակալման շրջանում. հնարավորության դեպքում ջրել նաև հատիկների լցման ժամանակ։

5. Ցանքսերի վրա սահմանել մշտական հսկողություն և բույսերի վրա հիվանդություններ և ֆնասատուներ յերևալուն պես հայտնել հող-բաժնին և Մ.Տ.Կ.-ին, ու անմիջապես ձեռնարկել պայքարը։

6. ՎԱՂ ՑԵԼ.—

1. Գարնանացան հացաբույսերի ցանքը ավարտելուն պես (առանց դադար տալու), վորտեղ հնարավոր է, նույնիսկ զուգահեռ գարնանացանին, անմիջապես ձեռնարկել վաղ ցելի աշխատանքներին և ավարտել հետևյալ ժամկետներին։

№	ԶՈՆԱՆԵՐ	Կատարման ժամկետը	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
Ա.	Քանաքեռ, Ավան և այլն	10/6	Ավարտել
Բ.	Մհուբ, Շեռաբ և այլն	5/6	»
Գ.	Նռնուս, Քյանրյան և այլն	20/6	»

2. Վաղ ցելի հերկը բացառապես կատարել գութաններով՝ համաձայն հողբաժնի և ՄՏԿ-ի հատուկ հրահանգի և անմիջապես փոցխել՝ գոլորշիացման մակերեսը փոքրացնելու համար։

3. Վաղ ցելն ամբողջ ամառվա ընթացքում պահել մոլախոտերից ազատ ու փխրուն դրությամբ, վորի համար ամառվա ընթացքում 1—2 անգամ բազմախոփանի (լուշչիլնիկով) գութանով յերևավար կատարել, գութանի թևերը նախորդը հանելով։

4. Վերջին փխրացումը կատարել աշնանացանից 10—15 որ առաջ (գիդրադ) փոցխերով։

7. ԲԵՐՔԱՇԱՎԱՔԸ

1. Մինչև բերքահավաքը կոլ. տնտ. վարչությունները հողբաժնի և ՄՏԿ-ի ագրոնոմների հետ պարտավոր են ստուգել կոլխոզի բոլոր ցանքերն ըստ կուլտուրաների և փոփոխակների և բարձր բերքատու, վորակով միատարը (զտասորդ), հիվանդություններից զերծ ցանքերն առանձնացնել և այդպիսին հնձել, հավաքել և կալսել առանձին՝ սերմացվի համար։ Հացահատիկի ամբողջ սերմացուն թե 1935 թվի աշնանը և թե 1936 թվի գարնանացանի պահանջվելիք քանակությունը զտել կալի մեջ և պահել առանձին պահեստներում կամ պահեստի առանձին մաս անջատել սերմացուի համար, այն հաշվով, վոր պահեստը լինի միանգամայն չոր, լուսավոր և նորմալ տաքությամբ։

2. Վերանորոգել, կարգավորել բերքավաքի գործիքները ու մեքենաները և նրանց պակասը լրացնել մինչև 1935 թվի 20/5 ամսի։

3. Կարգավորել միջ. գյուղ. և միջ. դաշտյան ճանապարհները, կամուրջները և նորերի կառուցումն ավարտել մինչև 1935 թվի մայիսի 25-ը։

4. Կատարել բոլոր պահեստների և տարաների անհրաժեշտ վերանորոգումը, մաքրել, ախտահանել և դեզինֆեկցիայի յենթարկել պահեստները։ Նոր պահեստների կառուցումն ավարտել առաջնակարգ հերթին մինչև 1935 թվի հուլիսի 15-ը

5. Հացահատիկի բերքահավաքն սկսել յուրաքանչյուր հասունացած հողակտորի վրա։ Ուկրայինկայի բերքահավաքն սկսել մոմային հասունացման շրջանի սկզբին 3—5-որվա ընթացքում, տեղական աշնանացանի (սպիտակահատ), Կամչատկայի, Գալգալոսի բերքահավաքն սկսել մոմային հասունացման շրջանում 5—8-որվա ընթացքում. գարու և հաճարի բերքահավաքն սկսել

մոմային հասունացման ժամանակ և հնձելու ու հավաքելու տևողությունը 8—10 օրից չպետք է անց կացնել։

Գարնանացան թափվող տեսակները հնձել մոմային հասունացման սկզբնական շրջանում 3—5 օր տևողությամբ, իսկ դիմացկուն, չթափվող տեսակները (կարմրահատ և այլն) 6—8 օրում։

6. Հնձի հետ զուգընթաց խուրձեր կապել, ամբողջությամբ բարձոցներում դասավորել. մեկ օրից ավել չի թույլատրվում քյուլաշը թողնել առանց հավաքելու և տեղափոխելու.

7. Կալսումը կատարել հնձի և տեղափոխմանը զուգնթաց. կալսման դեպքում խոնավ հացահատիկը պահեստ տեղափոխելը խստիվ արգելվում է. կալում պիտի չորացնել և ապա պահեստ տեղափոխել. քամհարած դարմանը խստիվ արգելվում է 2 օրից ավել կալում թողնել, պիտի տեղափոխել և ամբարել։

8. ԽՈՋԱՆԱՎԱՐ ՅԵՎ ՑՐՏԱՀԵՐԿ

1. Հացաբույսերի բերքահավաքի հետ զուգընթաց կատարել՝ մոլախոտերով խիստ վարակված հողամասերում խոզանավար բազմախոփ գութաններով 10—12 ս. մ. խորությամբ և այդ աշխատանքը վերջացնել մինչև օգոստոսի 30-ը. այդ նույն հողամասերը ուշ աշնանը վարել 18—20 ս. մ. խորությամբ։

2. Ցրտահերկն սկսել աշնանացանին զուգընթաց, հոկտեմբերի 1-ից և վերջացնել ամենաուշը նոյեմբերի 20-ին։ Պաշտպանել վարի խորությունը 18—20 ս. մ., թողնել առանց փոցխելու մինչև առաջիկա գարնանը։

3. Աշնանացանն սկսել 1935 թվի սեպտեմբերի 15-ից և ավարտել ամենաուշը մինչև հոկտեմբերի 30-ը, վարից հետո թույլատրել միայն ղոնղուրմա ցանքի կատարելը։

9. ՍՈՒՅՆ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴՆԵԼ.—

1. Գյուղխորհրդին կից վորակի հաշվառման հանձնաժողովի վրա,

2. Շրջանային դատախազի վրա,

3. Մեքենատրակտորային կայանի ագրոպերսոնալի վրա,

4. Հող-բաժնի ագրոպերսոնալի վրա։

3. Կոլտնտեսություններում ագրոկանոնների կիրառման համար սահմանել ներքին հսկողություն, հանձին կոլտնտեսության բրիգադիրի, բրիգադայի և օղակի ագրո-ավագների։

Կոտայքի շրջ. գործկոմի նախագահ Գ. Բաքայան
» » Հողբաժնվար Ա. Դովլաթբեկյան
» » Ավագ ագրոնոմ Խ. Խաչատրյան

ԲԱՆՋԱՐԱԲՈՒՍԱԿԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Մինչև փետրվարի 10-ը վերջացնել ցանքսի համար անհրաժեշտ բոլոր նախապատրաստական աշխատանքները (սերմերի ստուգում, գործիքների նորոգում և այլն)։

2. Մինչև հունվարի 30-ն ավարտել ջերմոցների վերանորոգումները, նոր ջերմոցների կառուցումը։

3. Այն տնտեսությունները, վորոնք ջերմոցներ չունեն, պետք է սածիլանոցների տեղը վարեն աշնանից և պարարտացնելու վաղ գարնանը կատարեն ցանքսը։

4. Վարի խորությունը կախված է հողի հատկությունից և կլիմայական պայմաններից. վարը պետք է կատարել 20 սմ. վոչ սաղր։

6. Հողի նախապատրաստական աշխատանքները վերջացնել ցանքից կամ սածիլումից 10—15 օր առաջ։ Վարից առաջ և վարից հետո հողից ջոկել քարերը և հողամասից հեռացնել։

7. Հողի յուրաքանչյուր մշակության ժամանակ հավաքել չայիրների տականքները։

8. Բանջարանոցի հողը պարարտացնել գոմաղբով, կոմպոստով կամ հանքային պարարտանյութով։

9. Թարմ կամ կիսաթարմ գոմաղբը հողի մեջ մացնել աշնանից, նամանավանդ վաղահաս ցանքսերի դեպքում, իսկ փթած գոմաղբը և մնացած պարարտանյութերը՝ գարնանից։

10. Բանջարանոցը մաքուր պահել մոլախոտերից, քաղհանը կատարել Հողբաժնի կողմից մշակված ժամանակներում։

11. Քաղհանել վոչ միայն մշակվող մարգերը, այլև շրջապատի առուներից և ճանապարհների յեզրերին բուսնող մոլախոտերը մինչև ծաղկելը։

12. Բանջարանոցը ջրելուց և քեշը գալուց հետո, հողի յերեսին առաջացած կեղևը վոչնչացնելու նպատակով, կատարել հողի փխրացում նշված ժամկետներում ըստ կուլտուրաների։

13. Ցանքը կամ սածիլումը կատարել շարքերով և յերկար մարգերով՝ մեքենայացում մտցնելու նպատակով։

14. Ցանել տեսակավոր և լավ վորակի, ստուգված սերմեր։

15. Բերքահավաքը կատարել որվա հով ժամանակը և հավաքված բերքը արևի տակ չթողնել։

16. Կատարել բերքի տեսակավորում և պայքարել բերքի փչացումների և կորուստների դեմ՝ ապահովելով ստանդարտ տարայով։

17. Ժամանակին պայքարել ֆնասատուների դեմ։

18. Կիրառել կանոնավոր ցանքաշրջանառություն՝ յելնելով սոցիալիստական պատվերից և տնտեսական հողային կլիմայական պայմաններից։

ԱՌԱՆՁԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կաղամբի ագրոմինիմումը

1. Կաղամբի դաշտը պարարտացնել գոմաղբով 40—80 տոննա 1 հեկտարին։ Հումուսով հարուստ հողերում հնարավոր և գոմաղբի փոխարեն տալ հանքային պարարտանյութեր, վորի համար 1 հեկտարին քնդունել.

ա) ցիանամիդ կամ ամոնիում սուլֆատ 300—400 կգ.
բ) սուպերֆոսֆատ . . . . . 300 կգ.
գ) կալիումի աղ 20 տոկոս . . . . . 150 կգ.

2. Վոչ մի դեպքում ուժասպառ հողերում առանց լրիվ պարարտացնելու կաղամբ չտնկել։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Լրիվ պարարտանյութ դա գոմաղբն է, վորն իր մեջ պարունակում է ազոտ, ֆոսֆորաթթվում և մյուս անհրաժեշտ սննդանյութերը

3. Կաղամբի համար հողն անպայման հերկել (20—25 սմ.) աշնանից։ Եթե աշնանը հնարավոր չեղավ, գարնանը պետք է հերկել շատ վաղ, և անմիջապես փոցխել

4. Պարարտանյութը գարնանը մտցնելիս կատարել կրկնահերկ 16—18 սանտիմետր խորությամբ։

5. Տնկել առողջ, կարճ և հաստ, տմուր սածիլներ։

6. Սածիլները դաշտ դուրս բերել հետևյալ ժամկետներում.

Վաղահաս կաղամբի համար.—

1. Դաշտավայրում (Ա. զոնայում) . . . . . 25/4—15/5
2. Նախալեռնային գոտում (Բ. Զոնա) . . . . 15/5—25/5

Ուշահաս կաղամբի համար.—

1. Դաշտավայրում . . . . (Ա. զոնայում) . . . 1/6—25/6
2. Նախալեռնային գոտում (Բ. զոնայում) . . 25/5—25/6

Միջին հասունության կաղամբները տնկել այս յերկու ժամկետների մեջ ընկած շրջանում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սածիլման վերջին ժամկետները հարմարեցնել տվյալ տեղի կլիմայական պայմաններին։

7) Կաղամբի մշակությունը տանել հարթ մարգերում ըստ յերկարության, վոչ թե ըստ լայնության և վոչ էլ թմբերի վրա, վորոնք խանգարում են մեխանիզացիային, թանկացնում մշակությունը։

8) Սածիլները տնկել հետևյալ հեռավորության վրա.

ա) Վաղահաս	շարքը	շարքից 50—60 սմ.
	բույսը	բույսից 30—40 »
բ) Միջին հասունության	շարքը	շարքից 50—60 »
	բույսը	բույսից 40—50 »
գ) Ուշահասներ	շարքը	շարքից 70—80 »
	բույսը	բույսից 50—60 »

Այսպիսով մեկ հեկտարին պահանջվում և վերանորոգման հետ.

Վաղահաս	40,000-ից—60,000 սածիլ.
Միջին	30,000-ից—40,000 »
Ուշահաս	25,000-ից—30,000 »

9) Սածիլումը կատարել «քեշ» հողում։ Սածիլելիս ստուգել, վարակվածները և հիվանդները խոտանել։

10) Սածիլների արմատները լավ սեղմել հողով և սածիլի աճման կոնը հողով ծածկել։

Սածիլումը կատարել ամպամած որերին, իսկ պարզ որերին վաղ առավոտյան կամ յերեկոյան հովին։

11) Սածիլները բանելուց և ամրացնելուց հետո կատարել առաջին փխրացումը։

12) Հետագա փխրացումները կատարել ըստ կարգի նույն հողի կեղևակալման։

13) Առաջին փխրացումից 10 որ հետո կատարել առաջին բուկլիցը։

14) Ամբողջ մշակության ընթացքում, ըստ կաղամբի տեսակի, կատարել 1—2 անգամ բուկլից և 2—3 անգամ քաղհան, նայած մոլախոտերի զարգացման։

15 Հողի լվիճների դեմ պայքարելու համար կատարել փոշոտում ծխախոտի փոշով։

16) Կաղամբաթիթեռների, թրթուռների դեմ պայքարել փարիզյան կանաչով և մկնդեղային նատրիումով։

17) Տլայի (վոշիլների) դեմ պայքարել անաբազին սուլֆատով։

18) Բերքահավաքից հետո դաշտից հեռացնել կաղամբի մնացորդները և այրել ու հողն անմիջապես հերկել։

ՏՈՄԱՏԻ (ՊԱՄԻԴՈՐԻ) ԱԳՐՈՏԵԽՆԻԿՈՒՄԸ.—

1. Տոմատի համար հողը հերկել աշնանից (20—25 ս.մ. խորությամբ), գարնանը կատարել կլինտներկ։

2. Տոմատի հողը պարարտացնել փտած գոմաղբով, կամ կոմպոստով, հեկտարին 30—40 տոննայի չափով, կամ հանքային պարարտանյութերով։

ա) Ցիանամիդ կամ ամոնիում սուլֆատ . . 200—300 կիլո մեկ հեկտարին.

բ) Սուպերֆոսֆատ . . . . . 350—450 կիլո մեկ հեկտարին.

3. Դաշտավայրի և նախալեռնային շրջանների ջրովի պայմաններում պամիդորը մշակել յերկար թմբերի վրա պատկեցրած ձևով. մշակությունը տանել առանց բճատման։

4. Ցանքաշրջանառության մեջ տոմատը տեղավորել 2-րդ դաշտում (թարմ պարարտացումից 2-րդ տարին), կամ ութ դաշտյան (առվույտի) ցանքաշրջանառության դեպքում՝ չորրորդ, վեցերորդ և ութերորդ դաշտում (վերջինում վաղահաս)։

5. Թմբերը պատրաստել տրակտորով, գութանով կամ բրդելիցով, կապել վորքան կարելի յե յերկար (նայած ջրելու հնարավորություններին) և տնկել թմբի յերկու կողմերում։

6. Թմբերի լայնությունը վերցնել հետևյալ չափերի.

Թմբի մեկ կողմում սածիլելու դեպքում.—

Թմբերի լայնությունը 60—70 ս.մ.
Թմբամիջի » 40—50 »
Թմբերի յերկարությունը 5—20 մետր

Տնկել շարքը շարքից . . . 100—120 ս.մ.
» բույսը բույսից . . . 25—30 »

Մեկ հեկտարի տնկման համար ապահովել 25—40 հազար սածիլ։

Թմբի յերկու կողմում սածիլելու դեպքում.—

Թմբի լայնությունը 90—100 ս.մ.
Թմբամիջի » . . . . . 100 »
Տնկել շարքը շարքից . . 90—100 »
» բույսը բույսից . 25— 30 »

Մեկ հեկտարի տնկման համար ապահովել 30—40 հազար սածիլ։

7. Լեռնային գոտու խոնավ հողերում մշակել փայտերի վրա, տնկելով շարքը շարքից 70—80 ս.մ. բույսը բույսից 30—40 ս.մ. հեռավորության վրա։ Մշակությունը տանել մեկ կամ յերկու ցողունի վրա, վորի համար կատարել բճատում։

8. Սածիլներ ստանալու համար ցանքը կատարել.

	Ջերմոցներում	Սածիլանոցներում
ա) Դաշտավայրում . .	20/2—10/4	5/4—15/4
բ) Նախալեռնային գոտ.	10/3—20/4	20/4—5/5
գ) Լեռնային գոտում	20/3—20/4	— —

Սածիլների տնկումը դաշտում կատարել.

	Ջերմոցային սածիլ	բացոդյա սածիլ
ա) Դաշտավայրում	23/4—25/5	25/5—5/6
բ) Նախալեռնային գոտում	15/5—10/6	1/6—10/6
գ) Լեռնային գոտում . .	25/5—10/6	— —

Այս ժամկետների սահմաններում սածիլը դաշտ դուրս բերել միայն ցրտահարությունների վախը խսպառ անցնելուց հետո։

9. Քաղհանը և փխրացումը կատարել ժամանակին, նայած հողի հասունությանը (քեշի գալուց) և մոլախոտերի զարգացմանը. ամբողջ մշակությանը ներքում կատարել 2—3 քաղհան, 2—3 փխրացում և մեկ անգամ քարհավաքը։

10. Վար դնելը և առաջին քաղհանը կատարել նախքան ծաղկելը։

11. Ջրել ըստ կարիքի, դաշտային գոտում 16—18 անգամ, նախալեռնային գոտում՝ 12—16 անգամ, իսկ լեռնային գոտում՝ 8—12 անգամ։

12. Կատարել բերքի տեսակավորում և կոնսերվարդյունաբերության հանձնումը կատարել համաձայն ստանդարտի։

13. Հիվանդ, փտած պտուղներն առանձնացնել, դուրս տանել դաշտից և հորել հողում։

14. Բերքահավաքը վերջացնել ցրտահարությունից առաջ, այն է՝ դաշտավայրում՝ մինչև նոյեմբերի 5-ը, նախալեռնային գոտում՝ մինչև հոկտեմբերի սկիզբը։

15. Իսկ մնացած պամիդորները հավաքել և պահել տաք նկուղներում, վորտեղ նրանք կկարմրեն։

ՏԱՔՏԵՂԻ ՑԵՎ ԲԱԴՐՋԱՆԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ.—

1. Տաքտեղը և բադրջանը տնկել հումուսով հարուստ և մոլախոտերից ազատ հողերում։

2. Հողը հերկել աշնանից 20—25 ս.մ. խորությամբ, գարնանը կրկնահերկ անել։

3. Պարարտացնել փթած գոմաղբով, կոմպոստով կամ հանքային պարարտանյութով—պամիդորի համար ընդունված նորմայով։

4. Մշակությունը տանել հարթ մարդերում. բադրջանը տնկել շարքը շարքից 50—60 ս. մ. և բույսը բույսից 30—40 ս.մ. վրա, վորով մեկ հեկտարին պահանջվում է 40—60 հազար սածիլ։

Պղպեղը տնկել շարքը շարքից 50—60 ս.մ.,
բույսը բույսից 30—35 ս.մ.

Վորպես կանոն ժիջշարքային մշակման աշխատանքները (կուլտիվացիան) մեքենայացման յենթարկել։

Չմեքենայացված դեպքում տնկել շարքը շարքից 30—40 ս. մ.
բույսը բույսից 30—35 ս. մ.

Այսպիսով ապահովել մեկ հեկտարին 75-ից 85 հազար սածիլ։

5. Սածիլներ ստանալու և սածիլը դաշտ փոխադրելու ժամկետները նույնն են, ինչ վոր տոմատի համար։

6. Սածիլները տնկել «քեշ» հողում, տնկման խորությունը պահպանել մինչև արմատավզիկը. սրանից խորը չտնկել։

7. Քաղհանը և փխրացումը կատարել դլխավորապես նախքան ծաղկելը։ Ամբողջ վեգետացիայի ընթացքում կատարել 2—3 քաղհան և 2—3 փխրացում։

8. Բերքահավաքը կատարել պարբերաբար ըստ պտուղների հասունության ստանդարտի. հավաքած բերքն անմիջապես փոխադրել դաշտից և չթողնել արևի տակ։

ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ
(ճակնդեղի, դյաղարի և այլն.)

1. Արմատապտուղներին հատկացնել լավ մշակված, փխրուն, կենսանյութերով հարուստ և մոլախոտերից միանգամայն ազատ հողամաս (շարքահերկ բույսերից հետո)։

2. Մշակության մեջ նոր մտցվող մանր անպետք հողերում արմատապտուղներ չմշակել։

3. Արմատապտուղների հողը հերկել աշնանից, վաղ գարնանը փոցխել և անմիջապես ցանել։

4. Հողը պարարտացնել հանքային պարարտանյութերով։

ա) Ցիանամիդ կամ ամոնիում սուլֆատ . . 200—250 կ. գ.
բ) Սուպերֆոսֆատ . . . . . 300—ից—350 » »
գ) Սուլֆինիտ . . . . . 200—ից—230 » »

5. Այս պարարտանյութերը մտցնել հողի մեջ աշնանից կամ վաղ գարնանը։

6. Իրրև պարարտանյութ արմատապտուղների համար կարելի է գործածել մոխիրը—հեկտարին 10—15 ցենտների հաշվով։

7. Ցանքը կատարել վորքան կարելի է շուտ, հենց գարունը բացվելուց, յերբ հողը չորանում է և հնարավոր է լինում ցանել։

8. Ցանքը կատարել շարքացանով, ցանել մեկ շարքի կամ ժապավենացանք՝ միջշարքային գծերով. ցանքի խորությունը վերցնել մեկ ու կեսից յերկու սանտիմետր։

9. Ծիլերը և շարքերը յերևալուն պես կատարել առաջին քաղհանը և փխրացումը, վորը հետագայում կրկնել ըստ կարիքի, նայած մոլախոտերի զարգացմանը և հողի կեղևակալմանը։

10. Եթե ցանքի դեպքում առաջին քաղհանի հետ միաժամանակ կատարել առաջին նոսրացումը, յերկրորդ նոսրացումը կատարել առաջինից 2—3 դեկադ հետո, թողնելով բույսը բույսից 6—14 ս. մ. հեռավորության վրա, նայած փոփոխակին։

11. Բերքահավաքը կատարել ամենակարճ ժամանակամիջոցում՝ արմատապտուղների լավ հասունացման ժամանակ, սակայն նախքան ցրտահարությունը։

12. Կատարել բերքի տեսակավորում։

13. Տեսակավորած արմատապտուղն առանց թառամեցնելու ամբարել։

ՍՈԽԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ.

1. Սոխը մշակել որդանական նյութերով հարուստ, թեթև, թափանցիկ, մինչև խոնավություն ունեցող հողերում, միանգամայն ազատ մոլախոտերից։

2. Ծանր կավային և խոնավ հողերում սոխ չմշակել։

3. Սոխը պարարտացնել փտած գոմաղբով կամ կոմպոստով, հեկտարին 30—40 տոննն կամ հանքային պարարտանյութերով, տալով հեկտարին.

1) Ցիանամիդ կամ ամոնիում սուլֆատ . 100-ից—150 կգ.
2) Սուպերֆոսֆատ . . . . . 200-ից—400 »
3) Սիլվինիտ կամ կալիումի աղ . . . . . 300-ից—400 »

4. Կալի-ֆոսֆորական պարարտանյութերի փոխարեն սոխը կարելի է պարարտացնել մոխրով, հեկտարին 10—15 ցենտներ։

5. Սոխի հողը վարել աշնանից 20—25 սմ. խորությամբ, վաղ գարնանը միայն փոցխել (կամ մակերեսային կրկնահերկել ու կատարել ցանքը)։

6. Մեկ հեկտարի ցանքսի նորման ընդունել 12 կգ.

7. Ցերը սոխի տերևները հասնեն 10 սմ. յերկարության, կատարել առաջին նոսրացումը, դաշտը մաքուր պահել մոլախոտերից, վորի համար ամբողջ վեգետացիայի ընթացքում կատարել 3—4 քաղհան։

8. Սոխը ջրել շատ զգուշությամբ, սկզբնական շրջանում քիչ և միշտ նկատի ունենալ բույսի պահանջը։

9. Բերքահավաքը կատարել սոխի տերևների լրիվ պառկելու, չորանալու և դեղնելու ժամանակ։

10. Հավաքած բերքը փռել բարակ շերտով արևի տակ 2-ից 5 որ և լավ չորացնել։

ՎԱՐՈՒՆԳԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ

1. Վարունգի համար հատկացնել տաք, թափանցիկ, հումուսով հարուստ և քիչ խոնավ հողեր։ (Վարունգի համար շատ լավ են խամ հողերը)։

2. Ծանր կավային և հումուսով աղքատ հողերում վարունգի դաշտը պարարտացնել փթած գոմաղբով կամ կոմպոստով, հեկտարին 30—40 տոննի չափով, իսկ հումուսով հարուստ հողերում մտցնել հանքային պարարտանյութեր։

ա) ցիանամիդ կամ ամոնիում սուլֆատ 240—300 կգ.
բ) սուպեր ֆոսֆատ . . . . . 350—400 »
գ) կալիումի աղ . . . . . 300—350 »

Բոլոր պարունակող պարարտանյութերը վարունգի դաշտերին չտալ։

3. Հողը հերկել աշնանից 20—25 սմ. խորությամբ. գարնանը կատարել մակերեսային մշակություն՝ կրկնահերկ և փոցխ։

4. Ցանքը կատարել ցրտահարությունների վտանգն անցնելուց հետո։

Դաշտավայրում . . . . . ապրիլի 20-ից հետո
Նախալեռնային գոտում . . . . մայիսի 10-ից »
Լեռնային գոտում . . . . . մայիսի 30-ից »

5. Ծիլերը յերկու տերևանի դառնալուց նոսրացնել և կատարել վերանորոգում։

6. Վարը դնել կամ բուկը լցնել 4—5 տերև ունենալուց։

7. Մինչև մշակելը հնարավորության սահմաններում չջրել։ Պտղաբերության շրջանում հաճախ ջրել։

8. Վեգետացիայի ընթացքում կատարել 2—3 փխրեցում և 2—3 քաղհան։

9. Հիվանդությունների, վնասատուների դեմ պայքարել ժամանակին։

Ալրացողի դեպքում փոշոտել ծծումբով, իսկ ալյայի դեմ պայքարել անարազինի և սապնաջրի լուծույթով։

10. Բերքը հավաքել ամեն 2—3-որը մեկ անգամ, իսկ եքսպորտի դեպքում ամեն որ. հավաքած բերքը տեղավորել և չթողնել արևի տակ ու անմիջապես հանձնել արտադրությանը (կոնտրակտացիայի դեպքում)։

11. Բերքահավաքից հետո բույսերի մնացորդները հավաքել և այրել։

ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐԻ ԱՄԲԱՐՈՒՄԸ

1. Վաղ գարնանը, բանջարապահեստները դատարկելուց հետո, նրանք ախտահանել և ամբողջ ամառը բանջարապահեստը լավ ոդափոխել ու չորացնել։

2. Ամառվա ընթացքում բանջարապահեստները վերանորոգել։

1008/34250
ՀՍՍՀ-ՍՍՀ
Ա. Մեհի անվ.
Ս. Մեսրոպի անվ.

3. Աշնանը բանջարապահեստները նորից ախտահանել կրաջրով՝ յերկաթի կամ պղնձի արջասպի հետ խառը, ծծմբի ծուխ տալ և ապա նոր բանջարեղենները լցնել։

4. Ամբարվելիք բանջարեղենները հողից հանելուց հետո խնամքով տեսակավորել։

5. Բոլոր բանջարապահեստներում կառուցել ոռոհաններ և ջերմաչափեր, ջերմաստիճանը դիտելու համար։

6. Պահեստում պատրաստել դարակներ։

7. Ամեն որ հետևել բանջարանոցների ջերմաստիճանին և ըստ այնմ եվ կանոնավորել ջերմաստիճանը, ոգտվելով ոռոհաններից։ Ամենալավ ջերմաստիճանը բանջարեղենների պահելու համար ընդունել 2 և կեսից 4° Ց.։ Ջերմաստիճանը դրանից բարձր լինելու դեպքում ձեռք առնել միջոցներ։

Շրջգործկոմի նախագահ՝ Պ. ԲԱԲԱՅԱՆ

Հողբաժնի վարիչ՝ Ա. ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ

Հողբաժնի ավագ ագրոնոմ՝ Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐԸ

№ № կ/կ	Աշխատանքների անունը	Կատարման ժամկետը	
		Կորիզավոր	Ընդավոր
	ՆՈՐԱՏՈՒՆԿ ՑԵՎ ՁՊՏՂԱԲԵՐՈՂ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ		
1.	ա) Նախքան նոր հողերի յուրացնելը, պտղատու այգիների տնկման համար հողամասի 4 կողմը տնկել քամադիմադիր ծառեր (թթենի, բարդենի, փշատ, ակացիա և այլն) դեպի այգին— առաջին շարքում տնկել թթենիներ, 2-րդ շարքում ակացիա կամ փշատենի, 3-րդ շարքում բարդենի . շարքերի հեռավորությունը իրարից վերցնել 1,5 մետր, իսկ ծառերի հեռավորությունը շարքերում՝ բարդենու համար կես մետր, իսկ մյուսների համար 1,5 մետր. տնկումը կատարել շախմատային սիստեմով գարնանը	5/IV	20/IV
	և աշնանը . .	25/X	10/XI
	բ) Նոր յուրացվելիք հողամասում նախքան այգի տնկելը 2 տարի առաջ ցանել բազմամյա խոտաբույսեր, հողի կազմությունը (սթրուկտուրան) բարելավելու համար։		
2.	ա) Հողի նախապատրաստումը—քարերից մաքրելը և պարարտացնելը .	20/IX	20/X
	բ) Հողամասի համատարած վար 30 սանտիմետր խոր. և 50—80 սանտիմ. լայնությամբ	25/IX	25/X
	գ) Հողամասի գծագրումը կատարել քառակուսի ձևով, իսկ լանջոտ տեղերում տնկել ռելեֆային ձևով, այն է լանջին հորիզոնական ուղղությամբ .	20/X	5/XI

№ № ը/կ	Աշխատանքների անունը	Կատարման ժամկետը	
		Կորիզավոր	Ընդավոր
	դ) Տնկվելիք ծառերի հեռավորությունը իրարից վերցնել		
	Ծիրանի համար 10×10 մ.		
	Խնձորի » 9×9 »		
	Տանձի » 8×8 »		
	Դեղձի » 6×6 »		
	Սալոր » 6×6 »		
	Բալ, կեռաս 9×9 »		
	Սերկեվիլ » 7×7 »		
3.	ա) Տնկման աշխատանքները, տընկիները նախապատրաստելը, տրմատների ծայրերի տնկման ժամանակ թարմացնելը, թողնելով 25—31 ս. մ. տարածություն, հեռացնել հիվանդ և վնասված արմատները։		
	Ծառերի տնկման ժամանակ փոփոխակների դասավորումը կատարել պըտղաբուծական Զոնալ կայանի կողմից մշակված փոփոխակների սխեմայի հիման վրա, վորն ապահովում է հաջող փոշոտումը.		
	բ) Այգետնկում կատարել նշված ժամկետին. տնկելուց հետո անմիջապես ջրել. ծառատնկում կատարել գարնանը	5/IV-20/IV	5/IV-20/IV
	աշնանը	20/X-1/XI	20X-5/XI
	գ) Նորատունկ այգիների միջշարքային տարածությունը ոգտագործել մինչև 8 տարեկան հասակը, իսկ դեղձենիների տակ դրված հողամասը մինչև 30 տարեկան հասակը, ցանելով միմիայն բաղմամյա խոտաբույսեր, հատապտուղներով և բանջարանոցային բուսականություններ, վորոնք մտնում են տվյալ շրջանի ցանքաշրջանառության մեջ։ Ցանքսը կատարել միջշարքային տարածություններում ծառերից 1,5 մետր հեռավորության վրա. խստիվ արգելվում է հացահատիկային կուլտուրաներ ցանել միջշարքային տարածություններում (կցվում է սույնին ցանքաշրջանառության սխեման։		
	ե) Տնկին տնկելուց հետո, անմիջապես նրա հիմնական ճյուղերի ծայրերն հատել, գոլորշիացման մակերեսը պակասեցնելու նպատակով. միայն ետումը կատարել գարնան տնկումից հետո. իսկ յեթե աշնանն է տնկվում, ետումը կատարել մյուս գարնանը .	10/IV—20/IV 20/X-1/XI	10/IV—25/IV 20/X-5/XI
	ԽՆԱՄԲԸ		
1.	Զեավորումը շարունակ, փոխված լիդերային սիստեմով ետ և չորուկների հեռացումը (կցվում է հրահանգը) . .	10/IV—20/IV	10/IV—25/IV
2.	Առաջին բուժումը բորդոյան հեղուկի մեկ տոկոսային լուծույթով, խառնելով 1 դույլ լուծույթին 8 գր. փարիզյան կանաչ	15/IV	30/IV
3.	2-րդ բուժումը, բորդոյան հեղուկի 0,75 տոկոսային լուծույթով, խառնելով 1 դույլ լուծույթին 10 գր. փարիզյան կանաչ	20/IV-1/V	20/V-1/VI
4.	Այգին ջրել 6—10 անգամ (տրվում է աշխատանքի սկսման սկիզբը և վերջը)	25/V	20/IX

№ № ը/կ	Աշխատանքների անունը	Կատարման ժամկետը	
		Կորիզավոր	Ընդավոր
5.	3-րդ բուժումը բորդոյան հեղուկի 1 տոկոսային լուծույթով, խառնելով մեկ դույլին 12 գր. փարիզյան կանաչ դարնանը.	5/VI	20/VI
6.	Պայքար լվիճների դեմ. յեթե լվիճներ յերևում են, սրսկել անաբազին սուլֆատ կամ նիկոտին սուլֆատով, մեկ դույլ ջրին վերցնել 10—18 գրամ անաբազին կամ նիկոտին սուլֆատ և 50 գրամ ոճառ.		
7.	Ծառերի բնի շուրջը քաղհանել և փխրեցնել դարնանը 2 անգամ. . . .	20/VI 20/VII	5/VII 10/VIII
8.	Աշնանը հավաքել ծառերի տերևները, դուրս հանել այգուց և այրել. աշխատանքը կատարել հետևյալ ժամ.	25/X	10/XI
9.	4-րդ բուժումը աշնանը 5% յերկաթարջասպ լուծույթով.	30/X	30/XI
10.	Ծառերի շուրջը աշնանը փորել կամ վարել. յեթե վերջին դեպքում դրաղեցրած է յեղել բանջարանոց, կուլտուրաներով, աշխատանքը կատարել գարնանը, ժամկետ	20/IV	5/V
11.	Աշնանը կատարել վերանորոգում լրացուցիչ տնկիներով.	25/X	10/XI
	ՊՏՂԱԲԵՐՈՂ ԱՅԳԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ		
1.	Ետել և չորուկները հեռացնել, ետելուց հետո անմիջապես մեծ վերքերը մածիկ քսել. աշխատանքը կատարել.	20/IV-5/V	20/IV-5/V
	ա) կատարել առաջին բուժումը մինչև ծառերի ծաղկելը. բուժման հաստմարվերցնել բորդոյան հեղուկի 1 տոկ.		

№ № ը/կ	Աշխատանքների անունը	Կատարման ժամկետը	
		Կորիզավոր	Ընդավոր
	լուծույթի, խառնելով մեկ դույլին 10 գր. փարիզյան կանաչ	15/IV	30/IV
	բ) 2-րդ բուժում 0,75% բորդոյան հեղուկի լուծույթով, խառնելով 1 դույլ լուծույթին 10 գր. փարիզյան կանաչ.	20/V-1/VI	25/V-5/VI
2.	Այգին ջրելը 3—5 անգամ հետևյալ ժամկետներում	25/V	10/IX
3.	ա) 3-րդ բուժումը 1 տոկ. բորդոյան հեղուկի լուծույթով, խառնելով 1 դույլ լուծույթին 12 գր. փարիզյան կանաչ.	5/VI	20/VI
	բ) Պայքար լվիճների դեմ. յեթե այդպիսին նկատվում է, սրսկել անաբազին կամ նիկոտին սուլֆատ, վերցնելով մեկ դույլ ջրին 10—12 գրամ անաբազին սուլֆատ և 50 գրամ ոճառ.		
	պտղակերի յերևալու դեպքում պատել բնի չորս կողմը վորսող գոտով . . .	15/VI	5/VII
4.	1—2 խոտհունձ. յեթե այգին տընկված է շարքերով և մասսիվ, հողամասում այդ դեպքում կատարել կուլտիվացիա.	20/VII	25/VIII
5.	Նեցուկներ տալ ծառներին (հենարաններ).	25/VI	20/VII
6.	Բերքահավաքը	15/VII—15/VIII	15/VIII—15/X
7.	Տերևները և փթած պտուղները հավաքել, դուրս հանել այգուց և այրել.	1/XI	15/XI
8.	Բները մաքրել փթած և մեռած կեղևներից	1/XI	10/XI
9.	Աշնանը կատարել 4-րդ բուժում 5 տոկոսային յերկաթ արջասպով . . .	1/XI	15/XI

№ № ըստ կ.	Աշխատանքների անունը	Կատարման ժամկետը	
		Կորիզավոր	Հնդավոր
10.	Ծառերի շուրջը փորել, իսկ այն այգիներում, որտեղ տնկված են շարքերով և մասամբ հողամասում, միջշարքային տարածություններում կատարել աշնանավար 10—15 սմ. խորությամբ, յելնելով հողի կազմությունից, ռելեֆից, տեսակից	20/IV	5/V
11.	Չորացած ծառերի տեղը նոր ծառ տնկել և լրացնել	25/X	10/XI

Շրջգործկոմի նախագահ՝ Պ. ԲԱԲԱՅԱՆ

Հողբաժնի վարիչ՝ Ա. ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ

Ավագ ագրոնոմ՝ Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Գլավլիտի լիազոր № 86 Պատվեր № 165 Տիրաժ 500
Հանձնված է արտադրության 1935 թ. մարտի 9-ին
Ստորագրված է ապագրության համար 1935 թ. մարտի 11-ին
Գյուղհրատի տպարան, Յերևան, Նալբանդյան 30

ՀՀ Ազգային գրադարան
NL0288019

14769